— Ես ամենեւին չէի սպասում, որ այդ գիւղում կը տեսնեմ քեզ, — ընդհատեցի ես մեր մէջ տիրող լռութիւնը:

— Իսկ ես սպասում էի, — պատասխանեց նա, ձեռքը դնելով իմ ուսի վրայ:

— Ուրեմն դու գիտէի՞ր, որ մենք գալու ենք այստեղ:

— Ինչպէս չգիտէի... Ասա՛, — խօսքը փոխեց նա, — հաւանո՞ւմ ես այդ գիւղը:

— Շատ գեղեցիկ տեղ է, հիանալի տեսարաններ ունի:

— Եւ լաւ բնակիչներ, — աւելացրեց նա:

Ասլանը մեզանից հեռու, գրասեղանի մօտ, պարապում էր: Նրան չխանգարելու համար մենք կամաց էինք խօսում: Նա ինչ-որ թոաբանական հաշիւներ էր անում եւ խորասուզուած էր խնդրի լուծման մէջ: Վերջը մատիտը մի կողմ դրեց, ինքն իրան ասելով, — է՛հ, սատանան տանե... չէ դուրս գալիս...

Վարժապետը թողեց ինձ, մօտեցաւ գրասեղանին եւ, մատը թղթի վրայ դնելով, ասաց,

— Այդ թոանշանները պէտք է միացնել միւսների հետ...

— Այդ ես փորձել եմ...

— Բայց դու մի սխալ ես արել... ահա այստեղ...

Ասլանը կրկին վեր առեց մատիտը:

Վարժապետը կրկին վերադարձաւ ինձ մօտ:

— Հիմա պատմիր, — ասաց նա, այժմ իսկապէս վարժապետի եղանակով, — ո՞ր երկրներում եղար, ի՞նչ մարդկանց հետ տեսնոեցար, ի՞նչ տպաւորութիւններ գործեցին քո վրայ տեսածներդ:

— Կարծեմ դու այդ բոլորը գիտես, թէ որտեղերում եղել եմ եւ ի՞նչ մարդկանց հետ տեսնոել եմ, — պատասխանեցի ես ժպտալով:

— Այո՛, գիտեմ, բոլորը գիտեմ...

— Էլ ո՞ւր ես հարցնում:

— Ինձ հետաքրքրում են քո տպաւորութիւնները եւ քո կարծիքները:

Ես համառօտ կերպով պատմեցի իմ ճանապարհորդական տպաւորութիւնները, պատմեցի, թէ որպիսի մտքեր էին զարթեցնում իմ մէջ հայրենի աշխարհի աւերակները, պատմեցի եւ իմ կրած հոգեկան տանջանքները ժողովրդի թշուառութեան մասին: Նա ուշադրութեամբ լսում էր, իսկ ես նրա